ռանի եկեղեցին այն այրը ուր Յիսուս իր աշակերտաց աղօթք սորվեցուց. յետոյ կ'երթան Բդրի եկեղեցին ուրկէ Յիսուս համբարձաւ յերկինս. երգերէ և ընթերցուածքներէ յետոյ կը մեկնին ի Ս. Յարութիւն, «Լուսաւորեա»ի ժամուն»: «. . . Սարկաւագին աղդարարութեան համաձայն, ամէն ոք ժամը վեցին կ'երթայ Զիթենեաց լեռը, բայց առաջին անգամ կը մտնեն Բդրի եկեղեցին, հո՛ն եպիսկոպոսը, քահանայք և ժողովուրդք կը նստին, տեղւոյն և օրուան յարմար երգեր և աղօթքներ կ'ըլլան, կը կարդացուի Համբարձման Աւետարանը: Յետոյ կ'օրհնեն երախաները և հաւատացեալները, և երգելով կ'իջնեն, ժամը իններն, Աշակերտարանի եկեղեցիին այրը, աղօթելէ յետոյ կը մեկնին, ժամը տասնին: «40–50 եպիսկոպոսներ ներկայ կ'ըլլային Ս. Խաչի Նաւակատիքին յԵրուսաղէմ. բազմաթիւ վանականք և ուխտաւորք կը հաւաքուէին Գ. օրը, Աշակերտարանի եկեղեցիին» (Տե՛ս "The Pilgrimage of Etheria„): Etheriaի տեղեկութիւններն աւելի պարզ են և յստակ, և անտարակուսելիօրէն կը հաստատեն Հայ Ճաշոցին տեղեկութիւնները: Խաչի Նաւակատիքի մասին ծանօթութիւն չի տար Հայ Ճաշոցը:

Յայտնի է թէ՝ Հայ Ճաշոցին պաշտամունքի ժողովոց մասին տուած նկարագրութիւններն օտարէն թարգմանուած են. բայց ինչ որ ալ ըլլան, անոնց գոյութիւնը կ'ապացուցանէ թէ նախապէս անհրաժեշտ պէտքի մը վրայ իւրացուած են և յետոյ, իբր անցեալոյն յիշատակներ, կրկնուած են եկեղեցական գրեանց մէջ: Ըստ իմ կարծեաց, Երուսաղէմի մէջ, եկեղեցական բաժանումէն յառաջ, Հայք ևս միասնաբար կը մասնակցէին Ս. Տեղեաց պաշտամունքի ժողովներուն, մինչև վեցերորդ դարու կէսը. յայտնի է թէ նոյն ժամանակի դաւանական խնդիրները պահ մը պէտք է ընդհատած ըլլան Հայոց մասնակցութիւնը. ինչպէս նոյն դարուն յիշատակարան մը՝ Երուսաղէմի Յովհաննէս Պատրիարքի՝ առ Աբաս Կաթողիկոսն Աղուանից՝ գրած թուղթը լիովին կը հասկցնէ. բայց նկատի առնելով Զաքարիա Պատրիարքին Պարսից ժողովին մէջ (614–15) ըրած արտայայտութիւնը, ի նպաստ Հայոց (Ատողիկ), և Մոտեստոսի՝ Երուսաղէմէն, Հայոց Կոմիտաս կաթողիկոսին գրած շատ փաղաքշական նամակն և «ողորմութեան խնդրանքը», հայ ուխտաւորներու ձեռքով (Սեբեոս), Երուսաղէմի Հայ Միաբանութեան դէմ կատարուած հալածան-